ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի»**
**և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների**
**սպառողների ջրամատակարարման**
**տևողության ցուցանիշների առնչությամբ**
**տեղեկատվությունների հավաստիության մոնիթորինգի**
**արդյունքների մասին**

ԵՐԵՎԱՆ 2015

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**ՆԱԽԱԲԱՆ** ---------- 2

**ԲԱԺԻՆ 1. Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերությունների և սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը** ---------- 4

1.1 Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերությունների ընտրությունը ---------- 4

1.2 Մոնիթորինգի ենթարկված սպասարկմանորակի ցուցանիշի ընտրությունը ---------- 5

1.3 Մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը ---------- 6

**ԲԱԺԻՆ 2. «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ** ---------- 7

2.1 «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները 7

2.2 «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության տարիներին գրանցված ջրամատակարարման տևողության ցուցանիշները ---------- 7

2.3 Մոնիթորինգի հարցումների իրականացումը «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում ---------- 9

**ԲԱԺԻՆ 3. «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ** ---------- 10

3.1 «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները 10

3.2 «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության տարիներին գրանցված ջրամատակարարման տևողության ցուցանիշները ---------- 10

3.3 Մոնիթորինգի հարցումների իրականացումը «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում ---------- 12

**ԲԱԺԻՆ 4. «Նոր Ակունք» ՓԲԸ** ---------- 12

4.1 «Նոր Ակունք» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները ---------- 12

4.2 «Նոր Ակունք» ՓԲԸ-ի գործունեության տարիների ջրամատակարարման տևողության ցուցանիշները ---------- 13

4.3 Մոնիթորինգի հարցումների իրականացումը «Նոր Ակունք» ՓԲԸ-ում ---------- 14

**ԲԱԺԻՆ 5. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում** ---------- 16

5.1 Ընկերությունների գործունեության արդյունք հանդիսացող ընդհանուր ձեռքբերումներն ու առկա ընդհանուր խնդիրները ---------- 16

5.2 Ընկերությունների գործունեության տարիների ջրամատակարարման տևողության ցուցանիշների ամփոփ նկարագիրը ---------- 17

5.3 Մոնիթորինգի ամփոփ արդյունքները ---------- 18

**ԲԱԺԻՆ 6. Եզրակացություններ և առաջարկություններ** ---------- 21

6.1 Եզրակացություններ ---------- 21

6.2 Առաջարկություններ ---------- 23


## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ


Հավելված 1 «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասրկման տարածքի, ջրամատակարարման գրաֆիկների, բաժանորդների քանակի և հարցումների վերաբերյալ ---------- 24

Հավելված 2 «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասրկման տարածքի, ջրամատակարարման գրաֆիկների, բաժանորդների քանակի և հարցումների վերաբերյալ ---------- 28

Հավելված 3 «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասրկման տարածքի, ջրամատակարարման գրաֆիկների, բաժանորդների քանակի և հարցումների վերաբերյալ ---------- 30

Հավելված 4 Հայտնաբերված խախտումների և վերլուծական տեղեկանքի վերաբերյալ շահագրգիռ կողմերին ուղարկված գրությունների և պատասխանների պատճենները ---------- 31

# ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2014 թվականի դեկտեմբերի 8-ի №452Լ որոշմամբ հաստատված հանձնաժողովի 2015 թվականի աշխատանքային ծրագրի 26-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը 2015 թվականի մայիսի 4-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պետք է իրականացներ «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ընտրանքային ուսումնասիրություն՝ ներկայացնելով կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփող համապատասխան վերլուծական տեղեկանք:

Նախ հարկ է նշել, որ հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 23-ի №129Ն, 2004 թվականի հունիսի 1-ի №62Ն և հոկտեմբերի 12-ի №128Ն, 2005 թվականի հուլիսի 22-ի №99Ն և №100Ն որոշումներով հաստատվել են համապատասխանաբար «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջները: Վերը նշված որոշումների համաձայն, խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 15-ը հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություն՝ իրենց սպասարկման տարածքի ջրամատակարարման տևողության ցուցանիշների մասին՝ տվյալ և հաջորդ տարվա համար: Հանձնաժողով ներկայացվող ջրամատակարամաn տևողության ցուցանիշները հենվում են ընկերությունների կողմից պարբերաբար հրապարակվող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների (այսուհետ՝ գրաֆիկ) վրա: Ընկերությունները, վերը նշված որոշումների պահանջների համաձայն, գրաֆիկները հրապարակում են տարեկան առնվազն երկու անգամ՝ տվյալ տարվա ապրիլ և սեպտեմբեր ամիսների 15-25-ն ընկած ժամանակահատվածներում, իրենց սպասարկման տարածքների բաժանորդներին հասու առնվազն մեկ օրաթերթում, որոնցից առաջինը գործում է տվյալ տարվա մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ն, իսկ երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 1-ն ընկած ժամանակահատվածի համար: Գրաֆիկները պետք է կազմվեն և հրապարակվեն այնպես, որ սպասարկման տարածքների ցանկացած բաժանորդ հնարավորություն ունենա ծանոթանալու իր գրաֆիկին: Հրապարակումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ ընկերությունները պարտավոր են իրենց սպասարկման տարածքների բաժանորդներին

առնվազն մեկ հեռուստաալիքով երեք օր անընդմեջ՝ օրական առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով, ժամը $18^{00}$-$23^{00}$-ն ընկած ժամանակահատվածում իրազեկել նոր գրաֆիկի հրապարակման ժամկետի և օրաթերթի անվանման մասին: Ընկերությունները պարտավոր են հրապարակումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ օրաթերթերի առնվազն մեկ օրինակ պատվիրված նամակով անվճար ուղարկել իրենց սպասարկման տարածքի տեղական ինքնակառավարման մարմիններ: Ընկերությունները պարտավոր են իրենց սպասարկման տարածքի բոլոր բաժանորդներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառված ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներառել նաև տվյալ բաժանորդի հաջորդ ամսվա ջրամատակարարման նվազագույն գրաֆիկի ժամերը:

Միևնույն ժամանակ, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 25-ի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Շիրակ-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից սպառողների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №290Ա որոշմամբ սահմանված կարգի համաձայն խմելու ջուր մատակարարող ընկերությունները յուրաքանչյուր եռամսյակի համար, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա ավարտը, հանձնաժողով են ներկայացնում տեղեկատվություններ իրենց կողմից սպասարկվող բնակավայրերի բաժանորդների խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ: Տեղեկատվությունները ներկայացվում են նշված կարգով հաստատված ձևին համապատասխան և հանձնաժողովի աշխատանքային ծրագրով սահմանված ժամկետներում հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայք էջում:

**Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված է մոնիթորինգի նպատակով խմելու ջուր մատակարարող ընկերությունների և սպասարկման որակի ցուցանիշի ընտրության հիմնավորումները, ընկերությունների ձեռքբերումներն ու առկա խնդիրները, ինչպես նաև մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը, ընթացքը և արդյունքները: Վերլուծական տեղեկանքի ամփոփիչ մասում ներկայացված են եզրակացությունները և առաջարկությունները:**

Սույն վերլուծական տեղեկանքի կազմման նպատակով մոնիթորինգի աշխատանքները համակարգել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Մ. Կոշեցյանը, իսկ մոնիթորինգն իրականացվել է հանձնաժողովի աշխատակազմի զարգացման և մոնիթորինգի վարչության կողմից:

## ԲԱԺԻՆ 1. Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերությունների և սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը

### 1.1 Մոնիթորինգի ենթարկված խմելու ջուր մատակարարող ընկերությունների ընտրությունը

ՀՀ-ում խմելու ջրի մատակարարման ոլորտում հանձնաժողովի կարգավորման դաշտում գործունեություն են իրականացնում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ները: Աղյուսակ 1-ում նվազման կարգով ներկայացված են ընկերությունների բաժանորդների քանակները 2015 թվականի մայիսի 1-ի դրությամբ.

*Աղյուսակ 1*

| Ընկերությունը | Բաժանորդների քանակը |
|---|---|
| «Երևան Ջուր» ՓԲԸ | 350980 |
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ | 270530 |
| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 53012 |
| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ | 40791 |
| «Նոր Ակունք» ՓԲԸ | 19047 |

Հաշվի առնելով, որ 2013 թվականին մոնիթորինգն իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում, իսկ 2014 թվականին՝ «Երևան Ջուր» ՓԲԸ-ում, ինչպես նաև «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների գործունեության իրականացման աշխարհագրական տարածքների և բաժանորդների համեմատաբար փոքր քանակները, 2015 թվականին մոնիթորինգն իրականացվել է «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում՝ խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշների գնահատման նպատակով: Կարևորվել է նաև այն հանգամանքը, որ 2016 թվականին ավարտվելու են բոլոր հինգ ընկերությունների գործունեության իրականացման պայմանագրերի ժամկետները և նախատեսված է, որ 2017 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում ջրամատակարարման հետ կապված ծառայությունները մատուցվելու են մեկ ընկերության կողմից՝ ոլորտում հանձնաժողովին վերապահվող կարգավորման առավել լայն լիազորությունների շրջանակի ներքո:

**Հարկ է նշել, որ ի սկզբանե ջրամատակարարման տևողության նվազագույն ցուցանիշների մասով հանձնաժողովի որդեգրած քաղաքականության հիմքում նպատակ է դրվել ոչ միայն բաժանորդների ջրամատակարարման տևողության միջին ցուցանիշի, այլ նաև բաժանորդների ջրամատակարարման տևողության նվազագույն շեմի շարունակական բարելավումը:**

### 1.2 Մոնիթորինգի ենթարկված սպասարկման որակի ցուցանիշի ընտրությունը

«Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների (այսուհետ՝ ընկերություններ) համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի ցուցանիշները սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխանաբար 2005 թվականի հուլիսի 22-ի №99Ն և №100Ն, 2004 թվականի հոկտեմբերի 12-ի №128Ն որոշումներով: Սպասարկման որակի ցուցանիշներն են.

1. Ջրամատակարարման տևողության ցուցանիշները, ներառյալ դրանց վերաբերյալ բաժանորդներին իրազեկման ընթացակարգը,
2. Ջրամատակարարման պլանային և վթարային ընդհատումների ցուցանիշները, ներառյալ դրանց իրազեկման ընթացակարգը:

**Սպասարկման որակի վերը նշված ցուցանիշներից այս պահին բաժանորդների տեսանկյունից ամենազգայունը ջրամատակարարման տևողության ցուցանիշն է՝** հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունների սպասարկման տարածքներում բաժանորդների ջրամատակարարումն իրականացվում է պարբերաբար հրապարակվող գրաֆիկների համաձայն: Գրաֆիկների հրապարակման և վերջինիս մասին իրազեկման ընթացակարգը ներկայացված է սույն վերլուծական տեղեկանքի նախաբանում:

Հանձնաժողովի կողմից ջրամատակարարման տևողության նվազագույն ցուցանիշները սահմանվում են ժամը $7^{00}$-$24^{00}$-ն ընկած ժամանակահատվածի համար՝ 4 ժամ և ավելի, 6 ժամ և ավելի, 8 ժամ և ավելի, 12 ժամ և ավելի, 17 ժամ և ավելի տևողությամբ, ինչպես նաև 24-ժամյա ջրամատակարարում ունեցող բաժանորդների խմբերի համար:

Ընկերություններին ներկայացված սպասարկման որակի ցուցանիշներով ամրագրված են, որ պլանային աշխատանքների պատճառով իրականացվող ընդհատումները չպետք է գերազանցեն 24 ժամը, իսկ վթարայինի դեպքում՝ 36 ժամը: Ընդ որում ընդհատման սկիզբ է համարվում ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով նախատեսված ջրամատակարարման այն ժամը, որից սկսած ջրամատակարարում չի իրականացվել:

Սույն վերլուծական տեղեկանքի շրջանակում մոնիթորինգն իրականացվել է «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների կողմից համապատասխանաբար 2015 թվականի ապրիլի 16-ի «Ասպարեզ», ապրիլի 25-ի «Լոռու մարզ» և ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետություն» թերթերում հրապարակված

ջրամատակարարման գրաֆիկներին առնչվող տեղեկատվությունների հավաստիությունը ընկերությունների սպասարկման տարածքների համար պարզելու նպատակով: Նշենք նաև, որ ընկերությունների կողմից մեծածախ ջրամատակարարման ծառայություններ ստացող համայնքներ չկան:

**Վերլուծական տեղեկանքում առավել մանրամասնվել են հանձնաժողովի կողմից սահմանվող՝ իրականացված մոնիթորինգի հիմքում դրված ջրամատակարարման տևողության ցուցանիշները:**

## 1.3 Մոնիթորինգի իրականացման մեթոդաբանությունը

«Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ները մանրածախ ջրամատակարարում են իրականացնում ընդհանուր թվով 67 համայնքներում՝ 5-ը քաղաքային և 62-ը գյուղական: Հաշվի առնելով համայնքների ոչ մեծ քանակները, ընտրանքներ չեն կիրառվել և մոնիթորինգն իրականացվել է բոլորի համար:

**Մոնիթորինգ իրականացվել է հարցման միջոցով: Հարցումը կազմակերպվել է համայնքների ղեկավարների շրջանում՝ տվյալ համայնքում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի մասին վերջինիս իրազեկված լինելու, ինչպես նաև հրապարակված ջրամատակարարման գրաֆիկներին առնչվող տեղեկատվության համապատասխանությունը փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշներին պարզելու նպատակով:**

Հարցումը համայնքների ղեկավարների շրջանում իրականացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններս առավել իրազեկված են իրենց համայնքների ջրամատակարարման գրաֆիկների մասին, քան բնակիչները, ինչը մեր կարծիքով հնարավորություն կտա ունենալ առավել համապարփակ գնահատական:

Հարցման միջոցով մոնիթորինգի ենթարկված համայնքների, նրանց ջրամատակարարման գրաֆիկների և բաժանորդների քանակի, համայնքների ղեկավարների, հարցումների ուղարկման ու պատասխանների ստացման ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունները բերված են 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածներում:

Մոնիթորինգի արդյունքներն առավել մանրամասն ներկայացված են ըստ ընկերությունների առանձնացված 2-րդ, 3-րդ և 4-րդ բաժիններում, որոնցում անդրադարձ է կատարվել ընկերությունների գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներին և առկա խնդիրներին, ջրամատակարարման տևողության ցուցանիշներին և մոնիթորինգի հարցումների իրականացման ողջ գործընթացին:

Այս համատեքստում առանձնացվել են այն ձեռքբերումներն ու առկա որոշակի բացթողումները, թերությունները և լուծումներ պահանջող այլ խնդիրները, որոնք ընդհանուր են երեք ընկերությունների համար և ներկայացվել 5-րդ բաժնում, որում ներառված են նաև մոնիթորինգի ամփոփ արդյունքները:

## ԲԱԺԻՆ 2. «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

### 2.1 «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները

**Խմելու ջրի մատակարարման ոլորտում «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության տարիների ձեռքբերումներից հիմնականը ջրամատակարարման նվազագույն և միջին տևողության մասով արձանագրված էական առաջընթացն է:** Ներկայումս ընկերության սպասարկման տարածքում գտնվող բոլոր համայնքները, բացառությամբ Գյումրի համայնքի, ունեն շուրջօրյա ջրամատակարարում: Գյումրի համայնքի ջրամատակարարման գործող նվազագույն շեմը 6-ժամյա է, որը նախատեսված է 2016 թվականի մայիսի 1-ից դարձնել 8-ժամյա, ինչը նույնպես լուրջ առաջընթաց կլինի ջրամատակարարման տևողության բարելավման ճանապարհին:

**Հետագայում առկա խնդիրներից որպես առաջնային անհրաժեշտ է դիտարկել Գյումրի համայնքի ջրամատակարարումը շուրջօրյա դարձնելը:**

### 2.2 «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության տարիներին գրանցված ջրամատակարարման տևողության ցուցանիշները

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների և ըստ այդ գրաֆիկների հանձնաժողով ներկայացվող բաժանորդների քանակների հիման վրա յուրաքանչյուր տարի վերանայվում են ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշները, որոնք ընկերության սպասարկման տարածքի համար սահմանվում են երկու խմբով.

1. Գյումրի քաղաքային համայնքի համար.
2. Մնացած 36՝ Մարալիկ քաղաքային և Ազատան, Ախուրիկ, Ախուրյան, Ամասիա, Այգաբաց, Առափի, Արեգնադեմ, Բայանդուր, Բենիամին, Գետք, Գոգհովիտ, Գտաշեն, Գուսանագյուղ, Երազգավորս, Լուսակերտ, Կապս, Կառնուտ, Հայկավան, Հայրենյաց, Հացիկ, Հողմիկ, Հոռոմ, Հովունի, Ձորակապ, Ղարիբջանյան, Մայիսյան, Մարմաշեն, Մեղրաշատ, Շիրակ, Ողջի, Ոսկեհասկ, Ջրաձոր, Սարատակ, Վահրամաբերդ, Քեթի գյուղական համայնքների համար:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների շարժն 2010-2015 թվականների համար ներկայացված է աղյուսակ 2-ում.

*Աղյուսակ 2*

| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների շարժը | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարին | 4 ժամ և ավելի | | 6 ժամ և ավելի | | 8 ժամ և ավելի | | 12 ժամ և ավելի | | 17 ժամ և ավելի | | 24 ժամ | |
| 1. Գյումրի քաղաքային համայնքի համար | | | | | | | | | | | | |
| 2010թ. | 88,5% | 34889 | 62,6% | 24679 | 49,1% | 19363 | 36,3% | 14328 | 21,5% | 8464 | 17,5% | 6917 |
| 2011թ. | 90,2% | 35399 | 64,4% | 25284 | 50,8% | 19950 | 36,6% | 14350 | 21,9% | 8581 | 18,5% | 7245 |
| 2012թ. | 94,0% | 37735 | 69,9% | 28033 | 55,1% | 22112 | 39,6% | 15911 | 26,5% | 10646 | 23,2% | 9316 |
| 2013թ. | 96,1% | 37223 | 71,0% | 27488 | 58,6% | 22690 | 41,4% | 16047 | 30,1% | 11650 | 24,2% | 9369 |
| 2014թ. | 100% | 40477 | 75,8% | 30670 | 71,2% | 28817 | 59,0% | 23863 | 42,3% | 17111 | 28,1% | 11360 |
| 2015թ. | - | - | 100% | 40477 | 94,0% | 38694 | 83,3% | 34285 | 72,5% | 29855 | 50,6% | 20816 |
| 2. Մնացած 36՝ Մարալիկ քաղաքային և 35 գյուղական համայնքների համար | | | | | | | | | | | | |
| 2010թ. | 87,6% | 7522 | 64,5% | 5541 | 49,7% | 4267 | 38,8% | 3327 | 38,2% | 3279 | 22,0% | 1887 |
| 2011թ. | 87,8% | 7676 | 82,9% | 7249 | 52,0% | 4544 | 38,9% | 3397 | 38,3% | 3349 | 23,1% | 2016 |
| 2012թ. | 99,3% | 12751 | 85,6% | 10986 | 67,8% | 8709 | 57,5% | 7383 | 56,8% | 7287 | 49,9% | 6401 |
| 2013թ. | 99,5% | 11244 | 99,3% | 11223 | 95,2% | 10762 | 88,6% | 10009 | 87,7% | 9917 | 81,0% | 9158 |
| 2014թ. | - | - | - | - | 100% | 11615 | 91,6% | 10638 | 91,6% | 10638 | 90,0% | 10455 |
| 2015թ. | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 11840 |

Աղյուսակ 2-ում բերված ցուցանիշներից երևում է, որ եթե 2010 թվականին Գյումրի քաղաքում բաժանորդների միայն 88,5%-ն ուներ նվազագույնը 4-ժամյա և 17,5%-ը՝ շուրջօրյա, ապա արդեն 2014 թվականին բոլոր բաժանորդներն ունեին նվազագույնը 4-ժամյա և 28,1%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: Սկսած 2015 թվականի մայիսի 1-ից բոլոր բաժանորդներն ունեն նվազագույնը 6-ժամյա, իսկ 50,6%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: Նախատեսված է 2016 թվականի մայիսի 1-ից բոլոր բաժանորդներին ապահովել նվազագույնը 8-ժամյա, իսկ 52,0%-ին՝ շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Մարալիկ քաղաքում և բոլոր 35 գյուղական համայնքներում 2010 թվականին բաժանորդների միայն 87,6%-ն ուներ նվազագույնը 4-ժամյա և 22,0%-ը՝ շուրջօրյա, 2013 թվականին համապատասխանաբար՝ 99,5%-ը և 81,0%-ը, իսկ 2014 թվականին բոլոր բաժանորդներն ունեին նվազագույնը 8-ժամյա և 90,0%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: Որպես ընկերության խոշորագույն ձեռքբերում պետք է նշել այն փաստը, որ 2015 թվականի մայիսի 1-ից Մարալիկ քաղաքային ու գյուղական բոլոր 35 համայնքներն ապահովված են շուրջօրյա ջրամատակարարմամբ:

«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում գրանցված ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշների շարժն 2010-2015 թվականների համար ներկայացված է աղյուսակ 3-ում.

*Աղյուսակ 3*

| «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշների շարժն ըստ հրապարակված գրաֆիկների | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. |
| 10,18 ժամ | 10,65 ժամ | 12,44 ժամ | 14,00 ժամ | 15,47 ժամ | 19,63 ժամ |

Աղյուսակ 3-ում բերված ցուցանիշները նույնպես խոսում են «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի այս մասով գրանցած մեծ առաջընթացի մասին: Ընկերության բոլոր բաժանորդների ջրամատակարարման միջին տևողության 2010 թվականի 10,18 ժամ ցուցանիշը 2015 թվականին գերազանցվել է մոտավորապես կրկնակի անգամ՝ աճելով 9,45 ժամով և կազմել 19,63 ժամ:

## 2.3 Մոնիթորինգի հարցումների իրականացումը «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում

2015 թվականի մայիսի 21-ին «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից «Ասպարեզ» թերթի սույն թվականի ապրիլի 16-ի համարում հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ գրավոր հարցումներ են կատարվել սպասրկման տարածքի բոլոր 37 համայնքների ղեկավարներից:

Բոլոր 37 համայնքների ղեկավարները խմելու ջրի մատակարարման հրապարակված և փաստացի գործող գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ հարցմանը պատասխանել են գրավոր՝ հայտնելով, որ փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին: Նրանցից 24-ը գրությամբ, իսկ 13-ը հանձնաժողովի գրավոր հացմանն ի լրումն կատարված հեռախոսազանգերին պատասխանել են, որ ստացել են հրապարակված գրաֆիկները:

**Այսպիսով, ըստ հարցումների միջոցով իրականացված մոնիթորինգի վերջնարդյունքի՝ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող բոլոր 37 համայնքների ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին և բոլոր համայնքների ղեկավարները ստացել են հրապարակված գրաֆիկները:**

## ԲԱԺԻՆ 3. «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ

### 3.1 «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները

**Խմելու ջրի մատակարարման ոլորտում «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության տարիների ձեռքբերումներից նույնպես պետք է առանձնացնել ջրամատակարարման նվազագույն և միջին տևողության մասով արձանագրված էական առաջընթացը:** Ներկայումս ընկերության սպասարկման տարածքում գտնվող բոլոր համայնքները, բացառությամբ Վանաձոր համայնքի, ունեն շուրջօրյա ջրամատակարարում, իսկ Վանաձոր համայնքի ջրամատակարարման գործող նվազագույն շեմը 4-ժամյա է:

**Հետագայում առկա խնդիրներից որպես առաջնային անհրաժեշտ է դիտարկել Վանաձոր համայնքի ջրամատակարարումը շուրջօրյա դարձնելը:**

### 3.2 «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության տարիներին գրանցված ջրամատակարարման տևողության ցուցանիշները

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների և ըստ այդ գրաֆիկների հանձնաժողով ներկայացվող բաժանորդների քանակների հիման վրա յուրաքանչյուր տարի վերանայվում են ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշները, որոնք ընկերության սպասարկման տարածքի համար սահմանվում են երկու խմբով.

1. Վանաձոր քաղաքային համայնքի համար.
2. Մնացած 16՝ Ամրակից, Անտառամուտ, Գյուլագարակ, Գուգարք, Դարպաս, Եղեգնուտ, Լեռնապատ, Կուրթան, Հոբարձի, Ձորագետ, Ձորագյուղ, Շահումյան, Վահագնաձոր, Վահագնի, Վարդաբլուր, Փամբակ գյուղական համայնքների համար:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի համար հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների շարժն 2010-2015 թվականների համար ներկայացված է աղյուսակ 4-ում.

*Աղյուսակ 4*

| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների շարժը | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարին | 4 ժամ և ավելի | | 6 ժամ և ավելի | | 8 ժամ և ավելի | | 12 ժամ և ավելի | | 17 ժամ և ավելի | | 24 ժամ | |
| 3. Վանաձորի քաղաքային համայնքի համար | | | | | | | | | | | | |
| 2010թ. | 37,5% | 12001 | 26,8% | 8997 | 22,9% | 7701 | 19,0% | 6372 | 18,9% | 6339 | 18,9% | 6339 |
| 2011թ. | 38,5% | 12961 | 27,4% | 9238 | 23,6% | 7968 | 19,4% | 6542 | 19,3% | 6504 | 19,3% | 6504 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2012թ. | 39,8% | 14102 | 29,5% | 10441 | 26,0% | 9201 | 22,2% | 7858 | 22,0% | 7805 | 22,0% | 7805 |
| 2013թ. | 57,4% | 20589 | 37,2% | 13325 | 34,5% | 12371 | 28,0% | 10052 | 27,5% | 9846 | 27,5% | 9846 |
| 2014թ. | 63,8% | 23068 | 55,3% | 20005 | 48,4% | 17509 | 42,0% | 15179 | 31,0% | 11209 | 31,0% | 11209 |
| 2015թ. | 100% | 36422 | 72,3% | 26351 | 71,5% | 26036 | 70,3% | 25591 | 70,3% | 25591 | 70,3% | 25591 |
| 4. Մնացած 16 գյուղական համայնքների համար | | | | | | | | | | | | |
| 2010թ. | 100% | 4184 | 0% | 0 | 0% | 0 | 0% | 0 | 0% | 0 | 0% | 0 |
| 2011թ. | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 4184 |
| 2012թ. | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 4279 |
| 2013թ. | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 4281 |
| 2014թ. | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 4348 |
| 2015թ. | - | - | - | - | - | - | - | - | - | - | 100% | 4369 |

Աղյուսակ 4-ում բերված ցուցանիշներից երևում է, որ եթե 2010 թվականին Վանաձոր քաղաքում բաժանորդների միայն 37,5%-ն ուներ նվազագույնը 4-ժամյա և 18,9%-ը՝ շուրջօրյա, 2014 թվականին համապատասխանաբար՝ 63,8%-ը և 31,0%-ը, ապա սկսած 2015 թվականի մայիսի 1-ից բոլոր բաժանորդներն ունեն նվազագույնը 4-ժամյա և 70,3%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: Նախատեսված է, որ 2016 թվականի մայիսի 1-ից շուրջօրյա ջրամատակարարում կունենա բաժանորդների 75,0%-ը:

Եթե գյուղական բոլոր 16 համայնքները 2010 թվականին ունեցել են նվազագույնը 4-ժամյա ջրամատակարարում, իսկ անգամ 6-ժամյա նվազագույն տևողությամբ ջրամատակարարում նախատեսված չի եղել ոչ մի բաժանորդի համար, ապա արդեն 2011 թվականից գյուղական բոլոր համայնքներն ապահովված են շուրջօրյա ջրամատակարարմամբ:

«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում գրանցված ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշների շարժն 2010-2015 թվականների համար ներկայացված է աղյուսակ 5-ում.

*Աղյուսակ 5*

| «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշների շարժն ըստ հրապարակված գրաֆիկների | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. |
| 7,24 ժամ | 9,69 ժամ | 9,93 ժամ | 11,75 ժամ | 13,37 ժամ | 18,81 ժամ |

Աղյուսակ 5-ում բերված ցուցանիշները նույնպես խոսում են «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի այս մասով գրանցած մեծ առաջընթացի մասին: Ընկերության բոլոր բաժանորդների ջրամատակարարման միջին տևողության 2010 թվականի 7,24 ժամ ցուցանիշը 2015 թվականին գերազանցվել է ավելի քան 2,5 անգամ՝ աճելով 11,57 ժամով և կազմել 18,81 ժամ:

### 3.3 Մոնիթորինգի հարցումների իրականացումը «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում

2015 թվականի մայիսի 21-ին «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից «Լոռու մարզ» թերթի սույն թվականի ապրիլի 25-ի համարում հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ գրավոր հարցումներ են կատարվել սպասարկման տարածքի բոլոր 17 համայնքների ղեկավարներից:

Բոլոր 17 համայնքների ղեկավարները խմելու ջրի մատակարարման հրապարակված և փաստացի գործող գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ հարցմանը պատասխանել են գրավոր՝ հայտնելով, որ փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին: Նրանցից 13-ը գրությամբ, իսկ 4-ը հանձնաժողովի գրավոր հարցմանն ի լրումն կատարված հեռախոսազանգերին պատասխանել են, որ ստացել են հրապարակված գրաֆիկները:

**Այսպիսով, ըստ հարցումների միջոցով իրականացված մոնիթորինգի վերջնարդյունքի՝ «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող բոլոր 17 համայնքների ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին և բոլոր համայնքների ղեկավարները ստացել են հրապարակված գրաֆիկները:**

## ԲԱԺԻՆ 4. «Նոր Ակունք» ՓԲԸ

### 4.1 «Նոր Ակունք» ՓԲԸ-ի գործունեության արդյունք հանդիսացող ձեռքբերումներն ու առկա խնդիրները

**Խմելու ջրի մատակարարման ոլորտում «Նոր Ակունք» ՓԲԸ-ի գործունեության տարիների ձեռքբերումներից նույնպես ամենահիմնականը ջրամատակարարման նվազագույն և միջին տևողության մասով արձանագրված էական առաջընթացն է:** Ներկայումս «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող բոլոր համայնքները, բացառությամբ Քարակերտ համայնքի, ունեն շուրջօրյա ջրամատակարարում: Քարակերտը «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք է ներառվել 2014 թվականի հոկտեմբերի 1-ից: Քարակերտ համայնքի համար սահմանված է 2015 թվականի մայիսի 1-ից՝ նվազագույնը 10-ժամյա, հոկտեմբերի 1-ից՝ 12-ժամյա, 2016 թվականի մայիսի 1-ից՝ 17-ժամյա, իսկ հոկտեմբերի 1-ից՝ 24-ժամյա ջրամատակարարում, ինչը մինչ այս պահը հաջողությամբ իրականացվում է:

**Առկա խնդիրներից պետք է առանձնացնել ընկերության բոլոր բաժանորդների խորքային հորերից մեխանիկական եղանակով իրականացվող ջրամատակարարումն՝** իր բոլոր բացասական հետևանքներով՝ լրացուցիչ ծախսեր, էլեկտրական էներգիայի մատակարարման ընդհատումների և պոմպերի խափանման հետևանքով գրանցվող ջրամատակարարման ընդհատումների քանակի ավելացում («Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող ընդհատումների գերակշիռ մասը վերագրվում են էլեկտրական էներգիայի ընդհատումներին) և այլն: Այս համատեքստում անհրաժեշտ է դիտարկել էլեկտրամատակարարման բազային տարբերակներ ապահովելու հարցը, ինչպես նաև մեխանիկական ջրամատակարարումները ինքնահոսով փոխարինելու հնարավորությունները:

### 4.2 «Նոր Ակունք» ՓԲԸ-ի գործունեության տարիների ջրամատակարարման տևողության ցուցանիշները

«Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից պարբերաբար հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների և ըստ այդ գրաֆիկների հանձնաժողով ներկայացվող բաժանորդների քանակների հիման վրա յուրաքանչյուր տարի վերանայվում են ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշները, որոնք ընկերության սպասարկման տարածքի համար սահմանվում են մեկ ընդհանուր խմբով՝ Արմավիր, Մեծամոր քաղաքային և Ակնալիճ, Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.), Դալարիկ, Մայիսյան, Լեռնագոգ, Խանջյան, Մյասնիկյան, Մրգաշատ, Նորապատ, Նորավան գյուղական համայնքների համար (Քարակերտ համայնքի համար սահմանված են առանձին տողով):

«Նոր Ակունք» ՓԲԸ-ի համար հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների շարժն 2010-2015 թվականների համար ներկայացված է աղյուսակ 6-ում.

*Աղյուսակ 6*

| «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների շարժը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարին | 8 ժամ և ավելի | | 12 ժամ և ավելի | | 17 ժամ և ավելի | | 24 ժամ | |
| 2010թ. | 100% | 15943 | 98,4% | 15687 | 80,4% | 12812 | 78,8% | 12562 |
| 2011թ. | - | - | 100% | 16608 | 84,4% | 14023 | 81,7% | 13570 |
| 2012թ. | - | - | 100% | 17561 | 92,0% | 16216 | 79,0% | 13878 |
| 2013թ. | - | - | 100% | 17883 | 93,2% | 16673 | 85,7% | 15319 |
| 2014թ. | - | - | - | - | 100% | 18150 | 93,2% | 17043 |
| 2015թ. | - | - | - | - | - | - | 100% | 18361 |

Աղյուսակ 6-ում բերված ցուցանիշներից երևում է, որ եթե 2010 թվականին բոլոր բաժանորդներն ունեցել են նվազագույնը 8-ժամյա և 78,8%-ը՝ շուրջօրյա, 2011 թվականին համապատասխանաբար՝ նվազագույնը 12-ժամյա և 81,7%-ը՝ շուրջօրյա, ապա արդեն 2011 թվականին բոլոր բաժանորդներ ունեին նվազագույնը 17-ժամյա և 93,2%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: Սկսած 2015 թվականի մայիսի 1-ից «Նոր Ակունք» ՓԲԸ-ի բոլոր բաժանորդները, բացառությամբ Քարակերտ համայնքի, ունեն շուրջօրյա ջրամատակարարում: Նախատեսված է Քարակերտ համայնքին շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովել 2016 թվականի հոկտեմբերի 1-ից:

«Նոր Ակունք» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում գրանցված ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշների շարժն 2010-2015 թվականների համար ներկայացված է աղյուսակ 7-ում.

*Աղյուսակ 7*

| «Նոր Ակունք» ՓԲԸ-ի ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշների շարժն ըստ հրապարակված գրաֆիկների | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. |
| 17,58 ժամ | 18,29 ժամ | 22,15 ժամ | 22,66 ժամ | 23,57 ժամ | 23,50 ժամ |

Աղյուսակ 7-ում բերված ցուցանիշները նույնպես խոսում են «Նոր Ակունք» ՓԲԸ-ի այս մասով գրանցած մեծ առաջընթացի մասին: Ընկերության բոլոր բաժանորդների ջրամատակարարման միջին տևողության 2010 թվականի 17,58 ժամ ցուցանիշը 2015 թվականին գերազանցվել է 5,92 ժամով և կազմել 23,50 ժամ (2015 թվականին միջին տևողության ցուցանիշի 2014 թվականի համեմատ 0,07 ժամով անկումը պայմանավորված է Քարակերտ համայնքի համամատաբար ցածր տևողությամբ ջրամատակարարման գրաֆիկով «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք ընդգրկումով):

### 4.3 Մոնիթորինգի հարցումների իրականացումը «Նոր Ակունք» ՓԲԸ-ում

2015 թվականի մայիսի 21-ին «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից «Հայաստանի Հանրապետություն» թերթի սույն թվականի ապրիլի 16-ի համարում հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ գրավոր հարցումներ են կատարվել սպասարկման տարածքի բոլոր 13 համայնքների ղեկավարներից:

Բոլոր 13 համայնքների ղեկավարները խմելու ջրի մատակարարման հրապարակված և փաստացի գործող գրաֆիկների համապատասխանության

վերաբերյալ հարցմանը պատասխանել են գրավոր: Նրանցից 11-ը գրությամբ, իսկ 2-ը հանձնաժողովի գրավոր հացմանն ի լրումն կատարված հեռախոսազանգերին պատասխանել են, որ ստացել են հրապարակված գրաֆիկները: Թվով 11 համայնքների ղեկավարներ իրենց գրությամբ հայտնել են, որ խմելու ջրի մատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին, իսկ Ակնալիճ և Մյասնիկյան համայնքների ղեկավարները տեղեկացրել են դրանց անհամապատասխանության մասին: Մասնավորապես, Ակնալիճ համայնքի ղեկավարն հայտնել է, որ բնակչության մի մասն է ապահովված շուրջօրյա ջրամատակարարմամբ (հարկ է նշել, որ Ակնալիճ համայնքն ամբողջությամբ շուրջօրյա ջրամատակարարման է անցել 2015 թվականի մայիսի 1-ից, իսկ 2014 թվականին բաժանորդների 71,4%-ը դեռևս ունեին 17-ժամյա ջրամատակարարում): Մյասնիկյան համայնքի ղեկավարը տեղեկացրել է, որ ջրամատակարարումը շուրջօրյա է և խնդիրներ են առաջանում միայն հուլիս-օգոստոս ամիսներին: Հանձնաժողովն արձանագրված խնդիրների մասին գրությամբ տեղեկացրել է «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների միջազգային գլխավոր տնօրեն պարոն Պ. Լորենին՝ կցելով Ակնալիճ և Մյասնիկյան համայնքների ղեկավարների գրությունների պատճենները: Հանձնաժողովի գրության պատճենն ուղարկվել է նաև «Նոր Ակունք» ՓԲԸ և Ակնալիճ ու Մյասնիկյան համայնքների ղեկավարներին: Ընկերությունը պատասխան գրությամբ ըստ էության ընդունել է ներկայացված խախտումները՝ ներկայացնելով դրանց վերացման նպատակով իրականացվող միջոցառումներն ու ժամկետները: Այնուհետև հանձնաժողովն ի լրումն գրություններ է ստացել նաև Ակնալիճ ու Մյասնիկյան համայնքների ղեկավարներից և «Նոր Ակունք» ՓԲԸ-ից, որոնցով հավաստել են, որ իրականացված միջոցառումների արդյունքում համայնքներն արդեն ամբողջությամբ ունեն շուրջօրյա ջրամատակարարում:

Ակնալիճ ու Մյասնիկյան համայնքներում արձանագրված խախտումների հետ կապված պետք է նշել, որ օրինակ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից վերջին յոթ՝ 2014 թվականի չորս և 2015 թվականի երեք եռամսյակների համար հանձնաժողով ներկայացված տեղեկատվություններում գրանցված ընդհատումներից 6-ն են վերաբերում Ակնալիճ և Մյասնիկյան համայնքներին (աղյուսակ 8): Ընդ որում այդ 6 ընդհատումներից միայն 1-ն է վթարային, իսկ մյուս 5-ն այլ բնույթի են:

*Աղյուսակ 8*

| № | Համայնքը | Ընդհատման ամսաթիվը | Ընդհատման պատճառը |
|---|---|---|---|
| 1 | Ակնալիճ | 18.04.2014թ. | Այլ բնույթի |
| 2 | Ակնալիճ | 04.06.2014թ. | Այլ բնույթի |
| 3 | Ակնալիճ | 03.08.2014թ. | Այլ բնույթի |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | Մյասնիկյան | 13.10.2014թ. | Վթարային |
| 5 | Մյասնիկյան | 02.05.2015թ. | Այլ բնույթի |
| 6 | Մյասնիկյան | 22.08.2015 թ. | Այլ բնույթի |

**Այսպիսով, ըստ հարցումների միջոցով իրականացված մոնիթորինգի վերջնարդյունքի՝ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող բոլոր 13 համայնքների ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին և բոլոր համայնքների ղեկավարները ստացել են հրապարակված գրաֆիկները:**

## ԲԱԺԻՆ 5. Մոնիթորինգի արդյունքների ամփոփում

### 5.1 Ընկերությունների գործունեության արդյունք հանդիսացող ընդհանուր ձեռքբերումներն ու առկա ընդհանուր խնդիրները

**Զգալի են խմելու ջրի մատակարարման ոլորտում «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների գործունեության տարիների ձեռքբերումները: Հատկապես շոշափելի դրական արդյունքներ են գրանցվել ջրամատակարարման նվազագույն և միջին տևողության աճի մասով: Աճի դինամիկան ակնհայտ է ինչպես շուրջօրյա ջրամատակարարման, այնպես էլ նվազագույն շեմի մասով:**

**Վիճակագրությունը դրական է նաև ոչ ամենօրյա ջրամատակարարում ունեցող բաժանորդների մասով:** Մասնավորապես, եթե «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն դեռևս 2014 թվականին ուներ ոչ ամենօրյա ջրամատակարարում ստացող թվով 13155 բաժանորդ, ապա 2015 թվականի մայիսի 1-ից այս ցուցանիշով հավասարվեց «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ներին՝ 0 բաժանորդ:

**Չնայած այն հանգամանքին, որ այս տարիների ընթացքում «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների առջև որպես պայմանագրային պարտավորություն ընդհանուր օգտագործման ծորակներից օգտվող բաժանորդների քանակի նվազեցման խնդիր դրված չի եղել, սակայն այստեղ նույնպես առկա է դրական դինամիկա:** Մասնավորապես՝ 2015 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ այդպիսի ջրամատակարարում ունեն թվով 1397՝ համապատասխանաբար 1020, 359 և 18 բաժանորդ, այն պարագայում, որ դեռևս 2014 թվականի մայիսի 1-ի դրությամբ այդպիսի ջրամատակարարում ունեին ընդհանուր թվով 2948 բաժանորդ, որից 2517-ը «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ում:

**Առկա են նաև որոշակի բացթողումներ, թերություններ և լուծումներ պահանջող այլ խնդիրներ:** Դրանցից են հրապարակվող ջրամատակարարման գրաֆիկների որոշ դեպքերում փաստացի իրականությանը չհամապատասխանելը, մատակարարվող խմելու ջրի ճնշման համար նախատեսված ցուցանիշներից շեղումները, հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունների ոչ հավաստի լինելը և այլն: Ընդ որում սպասրկման որակը բարելավելու, այդ թվում՝ մատակարարվող խմելու ջրի ճնշման և ներկայացվող տեղեկատվությունների հավաստիության ստուգումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է դիտարկել ջրամատակարարումը լոգերների միջոցով վերահսկելու պայմանագրային պահանջ սահմանելու հարցը: Պետք է դիտարկել նաև ջրամատակարարման գործող սխեմաների գոտիավորման և պոմպակայանների արդիականացման անհրաժեշտությունը՝ ջրառի, ծախսվող էլեկտրաէներգիայի, մեխանիկական եղանակով ջրամատակարարում ունեցող բաժանորդների, ընդհատումների, ջրի կորուստների և որակի խախտումների քանակների նվազեցման և այլ նպատակներով:

Հարկ է նշել, որ ջրամատակարարման տևողության աճին զուգընթաց փոխվում են բաժանորդների սպասելիքներն ու պահանջմունքները, հանրային վերահսկողությունը մեծանում է նաև սպասարկման որակի այլ ցուցանիշների մասով՝ ջրամատակարարման ընդհատումների քանակի և տևողության, ջրի որակի, դիմում-բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամանակահատվածի և այլն: Ուստի, ընկերությունների համար այս ուղղություններով ևս մեծանում են տարվող աշխատանքների արդյունավետության շարունակական բարելավման և հանրության առջև անընդհատ հաշվետու լինելու պահանջարկը: Անհրաժեշտ է աշխատանքներ տանել հանրությանը խմելու ջրի ոլորտում մատակարարի գործունեության մասին իրազեկման նոր մոտեցումներ կիրառելու ուղղությամբ:

## 5.2 Ընկերությունների գործունեության տարիների ջրամատակարարման տևողության ցուցանիշների ամփոփ նկարագիրը

Ներկայումս «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում գտնվող բոլոր համայնքները, բացառությամբ Գյումրի, Վանաձոր և Քարակերտ համայնքների, ունեն շուրջօրյա ջրամատակարարում: Գյումրի համայնքն ամբողջությամբ 2015 թվականի մայիսի 1-ից ունի նվազագույնը 6-ժամյա և 50,6%-ը՝ շուրջօրյա, իսկ 2016 թվականի մայիսի 1-ից բոլոր բաժանորդները

կունենան նվազագույնը 8-ժամյա և 52,0%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում: Վանաձոր համայնքն ամբողջությամբ 2015 թվականի մայիսի 1-ից ունի նվազագույնը 4-ժամյա և 70,3%-ը՝ շուրջօրյա ջրամատակարարում, 2016 թվականի մայիսի 1-ից շուրջօրյա ջրամատակարարում կունենան բաժանորդների 75,0%-ը: Քարակերտ համայնքը 2016 թվականի մայիսի 1-ից կունենա 17-ժամյա, իսկ հոկտեմբերի 1-ից՝ շուրջօրյա ջրամատակարարում:

Ջրամատակարարման միջին տևողության ցուցանիշները նույնպես խոսում են «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների այս մասով գրանցած մեծ առաջընթացի մասին: Ջրամատակարարման միջին տևողությունները 2015 թվականի մայիսի 1-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար՝ 19,63 ժամ, 18,81 ժամ և 23,50 ժամ:

## 5.3 Մոնիթորինգի ամփոփ արդյունքները

«Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ները մանրածախ ջրամատակարարում են իրականացնում ընդհանուր թվով 67 համայնքներում, որոնցից Շիրակի մարզի Գյումրի ու Մարալիկ քաղաքային և թվով 35 գյուղական համայնքների վարչական տարածքները հանդիսանում են «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, Լոռու մարզի Վանաձոր քաղաքային և թվով 16 գյուղական համայնքներինը՝ «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի, իսկ Արմավիրի մարզի Արմավիր ու Մեծամոր քաղաքային և թվով 11 գյուղական համայնքներինը՝ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածքները:

2015 թվականի մայիսի 21-ին ընկերությունների սպասարկման տարածքների համար 2015 թվականի ապրիլին հրապարակված և փաստացի գործող խմելու ջրի մատակարարման գրաֆիկների համապատասխանության վերաբերյալ հարցման ենթարկված բոլոր 67 համայնքների ղեկավարները հարցմանը պատասխանել են գրավոր: Համայնքների ղեկավարներից 48-ը գրությամբ, իսկ 19-ը հանձնաժողովի գրավոր հարցմանն ի լրումն կատարված հեռախոսազանգերին պատասխանել են, որ ստացել են հրապարակված գրաֆիկները: Նրանցից 65-ը գրությամբ հայտնել են նաև, որ ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին: Իսկ Արմավիրի մարզի Ակնալիճ և Մյասնիկյան համայնքների ղեկավարները տեղեկացրել են դրանց անհամապատասխանության մասին: Արձանագրված խախտումների վերացման նպատակով հանձնաժողովի դրսևորած հետևողականության վերջնարդյունքում Ակնալիճ ու Մյասնիկյան

համայնքների ղեկավարները և «Նոր Ակունք» ՓԲԸ-ն իրենց գրություններին ի լրումն ուղարկված գրություններով հավաստել են, որ ընկերության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում առկա խնդիրները վերացվել են և համայնքներն ամբողջությամբ անցել են շուրջօրյա ջրամատակարարում:

**Այսպիսով, ըստ հարցումների միջոցով իրականացված մոնիթորինգի վերջնարդյունքի՝ «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում գտնվող բոլոր 67 համայնքների (5-ը քաղաքային և 62-ը գյուղական) ջրամատակարարման փաստացի գործող գրաֆիկները համապատասխանում են վերջին անգամ հրապարակվածին և բոլոր համայնքների ղեկավարները ստացել են հրապարակված գրաֆիկները:**

Իրականացված մոնիթորինգի արդյունքներից, հանձնաժողով ներկայացված խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվություններում արձանագրված ընդհատումների քանակներից, տևողություններից և դրանց ըստ ընդհատումների տեսակների բաշխվածությունից կարելի է եզրակացնել, որ ոչ բոլոր ընդհատումներն են արձանագրվում տեղեկատվություններում, ինչպես նաև արձանագրված ընդհատումներից ոչ բոլորի դեպքում են ներկայացվում դրանց իրական պատճառներն ու տևողությունները: Օրինակ դիտարկված յոթ՝ 2014 թվականի չորս և 2015 թվականի երեք եռամսյակների համար խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկատվություններում երեք ընկերությունների կողմից արձանագրվել է ընդհանուր թվով 359 ընդհատում, որից 307-ը վթարային, 27-ը պլանային և 25-ը այլ բնույթի են: Մասնավորապես՝ «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն ներկայացրել է 175 ընդհատում, որից 174-ը վթարային և 1-ը պլանային, «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն՝ 153 ընդհատում, որից 127-ը վթարային և 26-ը պլանային, իսկ «Նոր Ակունք» ՓԲԸ-ն՝ 31 ընդհատում, որից 6-ը վթարային և 25-ը այլ բնույթի: Կոնկրետ պլանային ընդհատումների դեպքում կարելի է ենթադրել, որ հնարավոր է դրանք երբեմն ներկայացվում են նաև ոչ իրենց բնույթով՝ սահմանված 24-ժամյա առավելագույն տևողության փոխարեն 36-ժամյա առավելագույն տևողության իրավունքից օգտվելու նպատակով: **Հակառակ դեպքում իրականացվող ներդրումային և այլ աշխատանքների պարագայում անհասկանալի է քիչ թվով կամ ընդհանրապես պլանային ընդհատում չունենալու հանգամանքը**: Փաստենք նաև, որ «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների մոտ ջրի որակի շեղման հետ կապված և այլ բնույթի, իսկ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի մոտ պլանային և ջրի որակի շեղման հետ կապված ընդհատումներն իսպառ բացակայում են:

Հավելենք նաև, որ «Նոր Ակունք» ՓԲԸ-ի կողմից ընդունված՝ Ակնալիճ և Մյասնիկյան համայնքներում խմելու ջրի մատակարարման փաստացի և հրապարակված գրաֆիկների անհամապատասխանության վերաբերյալ փաստերը, որոնք խոսում են այդ համայնքներում ջրամատակարարման գրաֆիկների բազմաթիվ խախտումների մասին, արձանագրված չեն խմելու ջրի մատակարարման ընդհատումների վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկատվություններում:

## ԲԱԺԻՆ 6. Եզրակացություններ և առաջարկություններ

### 6.1 Եզրակացություններ

1. Զգալի են խմելու ջրի մատակարարման ոլորտում «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների գործունեության տարիների ձեռքբերումները՝ այդ թվում ջրամատակարարման նվազագույն տևողությունների շարունակական աճի մասով: Աճի դինամիկան ակնհայտ է ինչպես շուրջօրյա ջրամատակարարման, այնպես էլ նվազագույն շեմի առումով: Ներկայումս բոլոր համայնքները, բացառությամբ Գյումրի, Վանաձոր և Քարակերտ համայնքների, ունեն շուրջօրյա ջրամատակարարում: Գյումրի, Վանաձոր և Քարակերտ համայնքների ջրամատակարարման գործող նվազագույն շեմերն են համապատասխանաբար՝ 6-ժամյա, 4-ժամյա և 12-ժամյա:

